Հավելված № 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի № 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.
Արսեն Սարոյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.
ԱԻՆ Փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետի տեղակալ, փրկարարական ծառայության գնդապետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.
Ղրղստանի Հանրապետություն, Բալիկչի քաղաք, Ղրղստանի Հանրապետության Զինված Ուժերի «Էդելվեյս» զորավարժարան, 2019 թվականի օգոստոսի 5-ից 8-ը:

4. Հրավիրող կողմը.
Ղրղստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարություն:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Համաձայն ՀԱՊԿ անդամ պետությունների Անվտանգության խորհուրդի քարտուղարների կոմիտեի կողմից 2018 թվականի մայիսի 24-ին հաստատված ՀԱՊԿ ղեկավարման մարմինների և հավաքական անվտանգության ուժերի ու միջոցների կազմավորումների 2019 թվականի համատեղ պատրաստության պլան-ժամանակացույցի՝ մասնակցություն է ցուցաբերվել ՀԱՊԿ անդամ պետությունների Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի (ՕԱՀՈՒ) Հատուկ նշանակության ուժերի կազմավորումների (ՀՆՈՒԿ) կազմում ներգրավված անվտանգության մարմինների, ներքին գործերի նախարարությունների (ոստիկանության), ներքին զորքերի, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ոլորտում լիազոր մարմինների ստորաբաժանումների ղեկավար կազմի Ուսումնամեթոդական հավաքին՝ «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի Հատուկ նշանակության ուժերի կազմավորումների պատրաստության կատարելագործումը» թեմայով:

6.Քննարկված թեմաները.
1) ՀԱՊԿ Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերը, կազմը, նշանակությունը.
2) ՕԱՀՈՒ զորակազմերի պատրաստության կատարելագործումը.
3) ՀՆՈՒԿ ստորաբաժանումների կառավարման կազմակերպումը.
4) պաշտոնեական և հատուկ պարտականությունների կատարմանն ուղղված ՀՆՈՒԿ ղեկավար կազմի մասնագիտական պատրաստության մակարդակի բարձրացումը.

5) ՀՆՈՒԿ միասնական խնդիրների կատարման ընթացքում ստորաբաժանումների միջև համագործակցության կազմակերպման կատարելագործման հարցերը:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

1. Ուսումնամեթոդական հավաքն անցկացվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Սեմերիկովի ղեկավարությամբ, ՀԱՊԿ Քարտուղարության Խորհրդատուներ՝ Մ.Մելիխովի, Ս.Գոնչարի, Վ.Նեկլյուդովի և ՀԱՊԿ ՕԱՀՈՒ ՀՆՈՒԿ կազմում ներգրավված անվտանգության մարմինների, ներքին գործերի նախարարությունների (ոստիկանության), ներքին զորքերի, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ոլորտում լիազոր մարմինների ստորաբաժանումների ղեկավար կազմի մասնակցությամբ:

ՀԱՊԿ Քարտուղարության կողմից հատուկ կարևորվեց ՀԱՊԿ ՕԱՀՈՒ կառավարման համակարգի ստեղծման ու հետագա զարգացման ուղիները և այդ կապակցությամբ նշվեց՝ ինչպես հաջողությունների ու ձեռքբերումների, այնպես և առկա խնդիրների ու բացթողումների մասին, մասնավորապես՝

1) ՀԱՊԿ քարտուղարությունն իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեց 2018 թվականի սեպտեմբերի 10-ից 11-ը Ղազախստանի Հանրապետությունում ՀԱՊԿ անդամ-պետությունների փրկարարական ստորաբաժանումների պատրաստության «Скальный город-Астана» բազային զորավարժարանում (Ալմաթի մարզ, Կապչագայ քաղաք) բարձր մակարդակով անցկացված հատուկ-տակտիկական ուսումնավարժության կազմակերպիչներին և մասնակիցներին.

2) ՀԱՊԿ ղեկավարման մարմինների և հավաքական անվտանգության ուժերի ու միջոցների կազմավորումների համատեղ պատրաստության պլաններով իրականացվող միջոցառումներին հաճախակի մասնակցում են փոփոխվող (տարբեր) ներկայացուցիչներ՝ ինչը բացասական է այն առումով, որ հանգեցնում է ցածր պատրաստվածության ու չի ապահովում գիտելիքների նվազագույն մակարդակը.

3) ՀՆՈՒԿ ստորաբաժանումների անձնակազմի համար միասնական համազգեստի ներդրման անհրաժեշտության և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների և հնարավորությունների մասին.

4) ՀԱՊԿ ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծման և մասնավորապես՝ Հայաստանի համար այդ ուղղությամբ կահավորման հարցի լուծման մասին.

5) ՀԱՊԿ Պաշտպանության նախարարների խորհրդի 2019 թվականի ապրիլի 30-ի և Անվտանգության խորհրդի քարտուղարների կոմիտեի 2019 թվականի հունիսի 27-ի որոշմամբ հաստատված կառավարման մարմինների և կազմավորումների ուժերի և միջոցների անվտանգության հավաքական համակարգի միասնական պատրաստության 2020 թվականի պլան-ժամանակացույցով Հայաստանում նախատեսվող հատուկ ուսումնավարժության անցկացումը ՌԴ Նոգինսկի զորավարժարան տեղափոխման մասին:

2. Մասնակցություն ցոցաբերվեց Ուսումնամեթոդական հավաքի հետ համատեղ անցկացվող՝

1) «Գրոմ-2019» հատուկ տակտիկական ուսումնավարժության հանդիսավոր բացմանը.

2) ուսումնավարժության մասնակիցների միջև կրակային մրցումներին.

3) անօդաչու թռչող սարքավորումների ցուցահանդեսին:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշվեց Ուսումնամեթոդական հավաքի մասնակիցների էլեկտրոնային հասցեներին ՀԱՊԿ քարտուղարության կողմից ուղարկել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ ուսումնասրության և ուսուցման համար:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

1. Հաշվի առնելով, որ վերջին անակնկալ ստուգումն իրականացվել է 2015 թվականին և առկա են որոշակի չլուծված հարցեր, առաջարկվեց անակնկալ ստուգում իրականացնել նաև 2020 թվականին՝ ՀԱՊԿ Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի զորակազմերի և Հատուկ նշանակության ուժերի կազմավորումների Օպերատիվ ծավալման (փոխադրման) պլանի իրատեսության վերաբերյալ:

2. ՀԱՊԿ քարտուղարության կողմից համառ խնդրանք հնչեցվեց՝ ՀԱՊԿ շրջանակներում իրականացվող միջոցառումանը և նախորդող շտաբային բանակցություններին պարտադիր նույն ներկայացուցչի մասնակցությունն ապահովելու անհրաժեշտության մասին:

10.Ստորագրությունը, ամսաթիվը:

12.08.2019թ.